ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
N ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/2/2

ք. Երևան «16» ապրիլի 2018թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս գործադիր տնօրեն **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՀՈՎՋԱՎ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Հարությունյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Ջերմուկ համայնքի Կեչուտ թաղամասի խաղահրապարակի կազմակերպման» աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **մինչև 2018թ. հուլիսի 30-ը**:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում.

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (**Հավելված 5**) և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն օրացուցային օր) : Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 **աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 12,900,000 (տասներկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 2,150,000 (երկու միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր

(տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6/վեց/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎԶԱՎ» ՍՊԸ
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ,
Շահումյան 11
ՀՎՀՀ՝ 08909995
ՀՀ՝ 16049004133400
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Ջերմուկի մ/ճ
Տնօրեն
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 16 » ապրիլի 2018թ. կնքված
ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/2/2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]*

«Ջերմուկ համայնքի Կեչուտ թաղամասի խաղահրապարակի կազմակերպման» աշխատանքներ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Բարեկարգման աշխատանքներ			0.000	0.00
	Սալվածք շինության շուրջը				0.00
1	Մանկապարտեզի - գյուղապետարանի շենքի շուրջը բետոնե սալվածքի քանդում (56,48մ2)	$մ^3$	5.30	17.399	92.213
2	Շին.աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	9.800	1.344	13.172
3	Խճի շերտի պատրաստում սալվածքի տակ 12սմ. հաստ./56.48մ2/	$մ^3$	6.780	13.987	94.834
4	150x300մմ չափերի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով	գմ	52.00	6.684	347.547
5	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	$մ^2$	56.48	5.634	318.186
	Տարածքի բարեկարգման աշխատանքներ,խաղահրապարակների կազմակերպում			0.000	0.000
6	Խաղահրապարակների տակ առկա բուսահողի մշակում /2-րդ կարգ/ փոքր հզորությամբ բուլդոզերով տեղափոխելով 40մ /նոր կանաչապատման տարածքների տակ/	$մ^3$	87.30	0.458	39.985
7	Բուսահողի տրում 3 հոքով	$մ^2$	648.00	0.393	254.471
8	150x300մմ չափերի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով/ խաղահրապարակների եզրագծով և ճեմուղով/	գմ	348.00	6.684	2325.888
	Մանկական խաղապրապարակներ,			0.000	0.000

[1] Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման ամիսների

	հատակային շերտերի պատրաստում, մոտեցման ճեմուղիներ				
9	Բնահողի տոփանում խճով	$մ^2$	656.00	0.331	216.847
10	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում 10սմ. հաստ.	$մ^3$	65.600	13.987	917.566
11	Մանրահատիկ խարամավազային շերտ 5 սմ հաստ./մանրահատիկ շլաք/	$մ^3$	32.80	4.962	162.767
	Ընդամենը				4783.47
	Ջրուցատաղավարներ, նստարաններ,աղբամաններ, խաղասարքեր			0.000	0.00
	Ջրուցատաղավար 2 տեղ /հաշվարկը կատարված է 1 ջրուցատաղավարի համար/			0.000	0.00
12	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	2.52	2.361	5.95
13	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ /1,57մ3/	տն	2.83	1.344	3.80
14	Բնահողի հետլիցք ձեռքով	$մ^3$	0.95	0.987	0.94
15	Միաձույլ B15 դասի բետոնից կետային հիմքերի ապատրաստում	$մ^3$	1.250	58.176	72.72
16	Ներդիր էլեմենտներ տեղադրում	տն	0.048	885.685	42.51
17	120x120x6մմ մետաղական խողովակներից ջրուցատաղավարի կմախքի սյուների տեղադրում	տն	0.188	73.555	13.83
18	120x120x6մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	9.100	10.281	93.56
19	120x80x5մմ, 80x80x5մմ մետաղական խողովակներից հեծանային ուստվաշի տեղադրում,այդ թվում /80x80x5/մմ ծպեղնային հեծան,կարճասյուներ	տն	0.415	70.447	29.24
20	120x80x5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	13.000	7.301	94.91

21	80x80x5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	20.200	5.715	115.44
22	40x40x4մմ մետաղական խողովակներից ծպեղնային հեծանների տեղադրում	տն	0.242	70.447	17.05
23	40x40x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	57.400	2.092	120.07
24	80x80x5մմ, 60x60x5մմ, 40x40x4մմ, մետաղական խողովակներից պաշտպանիչ ճաղաշարերի տեղադրում	տն	0.271	82.285	22.30
25	80x80x5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	11.400	5.715	65.15
26	60x60x5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	5.810	4.088	23.75
27	40x40x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	22.000	2.092	46.02
28	Մետաղակոմինդրե գունավոր տանիքածածկույթի պատրաստում КП-21-0,55	$մ^2$	16.400	6.716	110.15
29	Հարթ ցինկապատ գունավոր թիթեղից գազաթնաթիթեղի տեղադրում L=4,2մ B=0,4մ	$մ^2$	1.70	7.613	12.94
30	Մետաղական մակերևույթների բարձրորակ յուղաներկում 2 անգամ	տն	1.11600	35.875	40.04
	Նստարաններ			0.000	0.00
31	30x50x3մմ մետաղական խողովակներից աթոռների կմախքի պատրաստում	տն	0.0340	77.785	2.64
32	30x50x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	10.200	1.668	17.01
33	Պողպատ թերթավոր 50x30x4մմ	տն	0.01	803.654	8.04
34	Նստարանների տախտակե երեսապատում 2,8x/0,46+0,36/ 4սմ հաստ. /0,079մ3/	$մ^2$	3.960	10.314	40.84

35	Մետաղական մակերևույթների բարձրորակ յուղաներկում 2 անգամ	տն	0.04400	35.875	1.58
36	Տախտակե մակերևույթի հղկում	$մ^2$	3.960	0.760	3.01
37	Տախտակե մակերևույթի 2 շերտ լաքապատում	$մ^2$	3.960	0.334	1.32
	Սեղան			0.000	0.00
38	30x50x3մմ մետաղական խողովակներից սեղանների կմախքի պատրաստում	տն	0.0460	77.785	3.58
39	30x50x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	13.740	1.668	22.92
40	Սեղանների երևսապատում 4սմ հաստ. տախտակներով /0,072մ3/	$մ^2$	1.800	10.314	18.57
41	Մետաղական մակերևույթների բարձրորակ յուղաներկում 2 անգամ	տն	0.04600	35.875	1.65
42	Տախտակե մակերևույթի հղկում	$մ^2$	3.800	0.760	2.89
43	Տախտակե մակերևույթի 2 շերտ լաքապատում	$մ^2$	3.800	0.334	1.27
	Հատակներ			0.000	0.00
44	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	2.70	2.361	6.37
45	Սվելնորդ բնահողի բարձում ա/հնարքաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	4.86	1.344	6.53
46	Բնահողի տոփանում խճի շերտով	$մ^2$	9.36	0.331	3.09
47	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^3$	1.120	13.987	15.67

48	B-7.5 դասի բետոնե հատակի սալի պատրաստում 8սմ	$մ^3$	0.750	37.200	27.90
49	5սմ հաստ. ցեմնտավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	$մ^3$	0.470	13.587	6.39
50	6սմ հաստ.բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում	$մ^2$	9.36	6.028	56.43
51	150x300մմ բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա	գմ	15.50	6.684	103.60
	Ընդամենը 1 հատ				1281.64
	Ընդամենը 2 հատ				2563.29
	նստարաններ 7հատ /հաշվարկը կատարված է 1 նստարանի համար/				0.00
	Հատակներ				0.00
52	Բնահողի տափանում խճի շերտով	$մ^2$	4.5	0.331	1.49
53	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^3$	0.540	13.987	7.55
54	B-7.5 դասի բետոնե հատակի սալի պատրաստում 8սմ հաստ	$մ^3$	0.360	37.200	13.39
55	5սմ հաստ. ցեմնտավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	$մ^3$	0.230	13.587	3.13
56	6սմ հաստ.բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում	$մ^2$	4.5	6.028	27.13
57	150x300մմ բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա	գմ	6.00	6.684	40.10
58	Անցքերի շաղափում բետոնե հատակներում	հատ	8.00	0.148	1.19
59	Խարսխային հեղուսների տեղադրում M12	հատ	8.00	0.479	3.83
60	Նստարաններ	հատ	1.000	51.269	51.27

	Ընդամենը 1 հատ				149.07
	Ընդամենը 7 հատ				1043.50
	Աղբամաններ 7հատ /հաշվարկը կատարված է 1 աղբամանի համար/				0.00
61	Աղբամանների տեղադրում	հատ	1.000	6.562	6.56
	Ընդամենը 1 հատ				6.56
	Ընդամենը 7 հատ				45.94
	Մանկական խաղահրապարակ /տեղադրման արժեքով/				0.00
62	Մանկական խաղասարքերի տեղադրում՝ սղարան	հատ	2.000	52.226	104.45
63	Մանկական խաղասարքերի տեղադրում՝ ճոճանակ	հատ	3.000	52.637	157.91
64	Մանկական խաղասարքերի տեղադրում՝ կարուսել	հատ	1.000	196.875	196.87
	Ընդամենը				459.24
	Հուշարձանի բարեկարգման աշխատանքներ՝կից հարթակ /53,37մ2/				0.00
65	Արկա թայթայված ասֆալտաբետոնե ծածկույթի բ.ենդումH=7սմ./կրց հարթակում/	մ^3	3.740	4.214	15.76
66	Խճի շերտի քանդում 12սմ	մ^3	6.400	0.540	3.45
67	Շոն աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	19.50	1.344	26.21
68	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ^3	53.370	13.987	746.50
69	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում 10սմ հաստ.B15 դասի բետոնից	մ^3	5.370	43.203	232.00

70	5սմ հաստ. ցեմնտավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	մ³	2.670	13.587	36.28
71	Բետոնե 6սմ հաստ գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում	մ²	53.37	6.028	321.74
72	Առկա քայքայված ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում հուշարձանի շուրջը	մ³	1.050	4.214	4.42
73	Խճի շերտի քանդում 12սմ	մ³	1.800	0.540	0.97
74	Շին.աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	5.50	1.344	7.39
75	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ³	9.360	13.987	130.92
76	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում 10սմ հաստ.B15 դասի բետոնից	մ³	7.800	43.203	336.98
77	Նոր 150x300մմ բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հոմքով	գմ	108.00	11.195	1209.06
78	40մմ հաստ.բազալտե սալահատակի պատրաստում	մ²	78.000	16.388	1278.26
79	Առկա /վերատեղադրվող/ նստարանների փայտյա նստատեղի փոխարինում	մ²	6.500	10.314	67.04
80	Տախտակե մակերևույթի հղկում	մ²	6.500	0.760	4.94
81	Տախտակե մակերևույթի 2 շերտ լաքապատում	մ²	6.500	0.334	2.17
	Ընդամենը				4424.10
	նստարաններ 4հատ /հաշվարկը կատարված է 1 նստարանի համար/				0.00
	Հատակներ				0.00
82	Բսահողի տրփանում/ խճի շերտով	մ²	4.5	0.331	1.49

83	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ^3	0.540	13.987	7.55
84	B-7.5 դասի բետոնե հատակի սալի պատրաստում 8սմ հաստ.	մ^3	0.360	37.200	13.39
85	5սմ հաստ. ցեմնտավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	մ^3	0.230	13.587	3.13
86	6սմ հաստ բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում	մ^2	4.5	6.028	27.13
87	150x300մմ բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա	զմ	6.00	6.684	40.10
88	Անցքերի շաղափում բետոնե հատակներում	հատ	8.00	0.148	1.19
89	Խարսխային հեղուսների տեղադրում M12	հատ	8.00	0.479	3.83
90	Նստարաններ	հատ	1.000	51.269	51.27
	Ընդամենը 1 հատ				149.07
	Ընդամենը 4 հատ				596.29
	Աղբամաններ 4հատ /հաշվարկը կատարված է 1 աղբամանի համար/				0.00
91	Աղբամանների տեղադրում	հատ	1.000	6.562	6.56
	Ընդամենը 1 հատ				6.56
	Ընդամենը 4 հատ				26.25
	Ընդհանուրը				13942.08
	Շահույթ	11%			1533.63
	Ընդամենը				15475.70
	ԱԱՀ	20%			3095.14

Ընդամենը				18570.85

* Կապալառուն աշխատանքները կատարում է Ջերմուկ համայնքում հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎԶԱՎ» ՍՊԸ
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ,
Շահումյան 11
ՀՎՀՀ՝ 08909995
ՀՀ՝ 16049004133400
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Ջերմուկի մասնաճյուղ
Տնօրեն
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 16 » ապրիլի 2018թ. կնքված
ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/2/2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՂՈՒՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը
1	2	3	4
1	**Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.04.2018թ**		
1	Շին.հրապարակի ուսումնասիրություն		
2	Նախագծի ուսումնասիրում , չափագրում		
3	Շին.նյութերի ձեռք բերման և պահեստավորման աշխատանքներ		
4	Գոյություն ունեցող եզրաքարերի ապամոնտաժում		
	Ապրիլի 25-ից մինչև մայիսի 15-ը ընկած ժամանակահատված		
1	Մանկապարտեզի - զյուղապետարանի շենքի շուրջը բետոնե սալվածքի քանդում (56,48մ2)	$մ^3$	5.30
2	Ասֆալտ-բետոնյա ծածկույթի քանդում	$մ^3$	3.7
3	Ավելնորդ գրունտի և շին.աղբի բարձում , տեղափոխում	տն	9.8
4	Բազալտյա եզրաքարերի հիմքերի պատրաստում	գծ/մ	108.0
	Մայիսի 15-ից մինչև մայիսի 30-ը ընկած ժամանակահատված		
1	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	58.4
2	Բետոնյա եզրաքարերի հիմքերի պատրաստում	գծ/մ	348.0
3	Բետոնյա նախապատրաստական շերտի պատրաստում 10սմ հաստությամբ	$մ^3$	5.3

4	Ջրուցարանների պատրաստման աշխատանքներ	հատ	2.0
5	40մմ հաստությամբ բազալտյա սալահատակի պատրաստում	$մ^3$	38.0
6	Բազալտյա եզրաքարերի տեղադրում	գծ/մ	108.0
	Մայիսի 30-ից մինչև հունիսի 10-ը ընկած ժամանակահատված		
1	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	65.6
2	Բետոնյա եզրաքարերի տեղադրում	գծ/մ	200.0
3	Նստարանների պատրաստման աշխատանքներ	հատ	7.0
4	6սմ հաստությամբ գեղարվեստական սալիկների պատրաստում	$մ^2$	53.4
5	40մմ հաստությամբ բազալտյա սալիկների տեղադրում	$մ^2$	40.
	Հունիսի 10-ից մինչև հունիսի 25-ը ընկած ժամանակահատված		
1	Բետոնյա եզրաքարերի տեղադրում	գծ/մ	148.0
2	Նստարանների տեղադրում	հատ	7.0
3	Ջրուցարանների տեղադրում	հատ	2.0
4	3-րդ կարգի բնահողի մշակում խաղահրապարակի տակ	$մ^3$	87.0
5	Ավելնորդ բնահողի բարձում և տեղափոխում	տն	48

	Հունիսի 25-ից մինչև հուլիսի 30-ը ընկած ժամանակահատված		
1	Նստարանների տեղադրում	հատ	4.0
2	Բուսահողի փռում մշակում ձեռքով	$մ^3$	648.0
3	Մանկական խաղերի տեղադրում	հատ	5.0
4	Աղբամանների տեղադրում	հատ	4.0
5	Ասֆալտ -բետոնյա ծածկույթի իրականացում	$մ^3$	56.5
6	Շին -աղբի բարձում տեղափոխում	տն	5.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	*Կնքման պահից*	*2018թ. հուլիսի 30-ը*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎԶԱՎ» ՍՊԸ
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ,
Շահումյան 11
ՀՎՀՀ՝ 08909995
ՀՀ՝ 16049004133400
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Ջերմուկի մասնաճյուղ
Տնօրեն
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 16 » ապրիլի 2018թ. կնքված
ՋԳՀ-ԱԵՀԲ-2018/2/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	Ընդամենը
	45231177	աշխատանքներ	12 900 000	12 900 000	12 900 000	12 900 000	12 900 000	12 900 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎՋԱՎ» ՍՊԸ
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ,
Շահումյան 11
ՀՎՀՀ՝ 08909995
ՀՀ՝ 16049004133400
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Ջերմուկի մասնաճյուղ
Տնօրեն
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«16» ապրիլի 2018թ. կնքված
ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/2/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ բարդությունը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 16 » ապրիլի 2018թ. կնքված
ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/2/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
« 16 » ապրիլի 2018թ. կնքված
ՋԳՀ-ԱՇՀԲ-2018/2/2 ծածկագրով պայմանագրի

ՆԱԽԱԳԻԾ (կցվում է)